## ՆՊԱՏԱԿԸ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) նպատակն է սահմանել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից տեղական և միջազգային արժեթղթերի շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման հիմնական կարգն ու պայմանները:

## ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ընթացակարգը կիրառվում է Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:

## ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

| | |
|---|---|
| «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք | |
| «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին ՀՀ կենտրոնական բանկի 08.04.2008թ. թիվ 113-Ն որոշում ***(Կանոնակարգ 4/07)*** | |
| «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» Կանոնակարգ 4/06-ը հաստատելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 11.03.2008թ. թիվ 69-Ն որոշում ***(Կանոնակարգ 4/06)*** | |
| «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում հաշվառվող արժեթղթերի պահառության ծառայությունների միջնորդավորման ընթացակարգ | ACBA 75 PR 40 |
| «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ պետական պարտատոմսերի պահառության ընթացակարգ | ACBA 75 PR 29 |
| ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և միջազգային սանկցիաների պահպանման կարգ | GROUP ORD 01 |
| «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բանկային հաշիվների սպասարկման ընթացակարգ | ACBA 72 PR 01 |
| Բանկի վերաբերյալ տեղեկություններ | eFO 75-12-33 |
| Արժեթղթերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերի նկարագիր | eFO 75-12-34 |
| Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Բանկի և հաճախորդի շահերի բախման սահմանափակման և պատվերների ընդունման/կատարման կանոններ | eFO 75-12-35 |
| Ներդրումային փորձի և գիտելիքների մասին հարցաթերթիկ | eFO 75-12-36 |
| Հաճախորդին պրոֆեսիոնալ դասակարգելու արձանագրություն | eFO 75-12-46 |
| Պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու | eFO 75-12-37 |

| | |
|---|---|
| համաձայնություն | |
| Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակնե-րում իրավաբանական անձի կողմից լիազորված անձանց ցուցակ | eFO 75-12-38 |
| Գաղտնագրերի թերթիկ | eFO 75-12-47 |
| Դրամական միջոցների դեպոնացման և արժեթղթերի առևտրային արգելադրման դիմում | eFO 75-12-39 |
| Արժեթղթերի գնման/վաճառքի հանձնարարական N__ (երկրորդային շուկայի դեպքում) | eFO 75-12-40 |
| Արժեթղթերի գնման/վաճառքի հանձնարարական N__ (առաջնային շուկայի դեպքում) | eFO 75-12-41 |
| Հանձնարարականի մերժման ծանուցում | eFO 75-12-42 |
| Հանձնարարականի կասեցման դիմում | eFO 75-12-43 |
| Արժեթղթերի առքի/վաճառքի տոմս | eFO 75-12-44 |
| Գործարքի մասին հաշվետվություն | eFO 75-12-45 |
| Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի հավելված արժեթղթի առք ու վաճառքի պայմանագիր | eFO 72-00-677 |
| Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր | eFO 72-00-678 |
| Համապատասխան Միջազգային շուկայի համար կիրառելի օրենսդրություն, այլ նորմատիվ իրավական ակտեր և/կամ տվյալ Միջազգային շուկայում կարգավորող մարմնի կողմից սահմանված կամ տվյալ Միջազգային շուկայում ներդրումային գործունեությանը վերաբերող իրավական ակտեր, Առևտրային համակարգում պարտադիր կիրառելի կանոններ, ընթացակարգեր, կանոնակարգեր և ներքին կարգավորումներ | |
| Բրոքերային ծառայությունների ընդհանուր պայմաններ | eFO 72-00-680 |
| Միջազգային շուկայում բրոքերային ծառայություններից օգտվելու դիմում-պայմանագիր | eFO 72-00-681 |

## ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընթացակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

***Հաճախորդ՝*** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, իսկ միջազգային շուկաների դեպքում միայն ֆիզիկական անձ, ով դիմել է Բանկ և կնքել է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր, կամ ով դիմել է Բանկին Բրոքերային ծառայություններից օգտվելու նպատակով.

***Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակից՝*** Բանկի աշխատակից, ով ունի համապատասխան որակավորում և Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից տրված հրամանի հիման վրա լիազորված է իրականացնել բրոքերային գործունեություն.

***ՀՀ ԿԲ՝*** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

***Արժեթուղթ՝*** ՀՀ օրենսդրությամբ որպես արժեթուղթ սահմանվող գույքային իրավունք, ինչպես նաև միջազգային շուկաների բաժնետոմս, կորպորատիվ և պետական պարտատոմս, բորսաներում վաճառվող ֆոնդի փայեր (ETF).

***Բրոքերային ծառայություն՝*** Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը, ինչպես նաև Բանկի կամ Հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների իրականացումը.

***Բանկային հաշիվ՝*** ՀՀ դրամով և/կամ արտարժույթով Բանկում բացված՝ Հաճախորդի հաշիվ, որը նախատեսված է Ընթացակարգով և պայմանագրով նախատեսված և բրոքերային գործառնություններից բխող Հաճախորդի և Բանկի միջև փոխադարձ հաշվարկների իրականացման համար.

***Արժեթղթերի հաշիվ/Դեպո հաշիվ՝*** արժեթղթերի/ՀՀ պետական դրամային պարտատոմսերի և դրանց նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների հաշվառման տեղեկատվական հենք.

***Բրոքերային հաշիվ*** - Հանձնարարականների կատարման համար անհրաժեշտ և Հաճախորդի անունով բացված՝ դրամական միջոցների հաշիվ միջազգային շուկայում բրոքերային ծառայություններ մատուցող մասնագիտացված անձանց մոտ.

***Կարգավորվող շուկա՝*** կարգավորվող շուկա է համարվում հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգը, որը կանոնավոր կերպով արժեթղթերի առքի և վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է արժեթղթերով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ: Կարգավորվող շուկան ներառում է ֆոնդային բորսան և այլ կարգավորվող շուկաները.

***Չկարգավորվող շուկա՝*** շուկա որը չի համարվում կարգավորվող.

***Միջազգային շուկա*** - Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող արժեթղթերի շուկաներ.

***Հարթակ*** - acba digital ինտերնետ բանկինգ համակարգում ինտեգրված Բանկի հետ համագործակցող Միջազգային բրոքերային ընկերության վեբ տիրույթ.

***Առևտրային համակարգ*** - Միջազգային շուկայում Արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող միջոցների ամբողջություն.

***Հանձնարարական՝*** Հաճախորդի կողմից Բանկին տրվող և Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով Բանկի կողմից գործարքի իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ կամ հեռախոսով Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակցին ներկայացված հաղորդագրություն կամ acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ներկայացված հաղորդագրություն, ինչպես նաև Հարթակի միջոցով Բանկին ուղղված հանձնարարություն՝ Միջազգային շուկայում Արժեթղթերով գործարքների կատարման.

***Պատվեր՝*** Հանձնարարականում նշված տեղեկությունների ամբողջություն, որը ներառում է գործարքի կնքման համար անհրաժեշտ գնային, ծավալային և ժամանակային պայմանները.

***Շուկայական պատվեր՝*** Պատվեր, որը նախատեսում է գործարքի կատարում՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող լավագույն գնով.

***Լիմիտային պատվեր՝*** Պատվեր, որը նախատեսում է գործարքի կատարում՝ Պատվերում ֆիքսած գնից ոչ բարձր/ոչ ցածր գնով Արժեթուղթը գնելու/վաճառելու պայմանով.

***Ստոպ պատվեր՝*** Պատվեր, որը նախատեսում է գործարքի կատարում՝ Պատվերում նշված գնին կարգավորվող շուկայում տվյալ Արժեթղթերի գինը հասնելու դեպքում.

***Ստոպ-լիմիտային պատվեր՝*** Պատվեր, որը միաժամանակ ներառում է գնման/վաճառքի լիմիտային Պատվեր մի գնով և գնման/վաճառքի ստոպ Պատվեր մեկ այլ գնով, ընդ որում՝ սույն պատվերն ընդունվում է միայն կարգավորվող շուկայում գործարքներ իրականացնելու դեպքում.

***Միջին գնի պատվեր (MidPrice)*** – գործարքը կատարվում է լավագույն առաջարկի և լավագույն պահանջարկի միջին հաշվարկային գնով.

***Փակման գնով շուկայական պատվեր (Market-on-Close Order)*** – շուկայական պատվերի տեսակ է, որի դեպքում գործարքը կատարվում է բորսայի առևտրային նստաշրջանի փակման գնին հնարավորինս մոտ գնով.

***Փակման գնով լիմիտային պատվեր (Limit-on-Close Order)*** – լիմիտային պատվերի տեսակ է, որը կատարվում է առևտրային նստաշրջանի փակման պահին, եթե սահմանված լիմիտային գինը հավասար է կամ ավելի բարենպաստ, քան փակման գինը.

***Trailing Stop պատվեր*** – նախատեսված է ներդրողին հնարավորություն տալու սահմանել առավելագույն հնարավոր կորուստ՝ առանց սահմանափակելու հնարավոր շահույթը: Օրինակ՝ վաճառքի Trailing Stop պատվերի դեպքում սահմանվում է ստոպ գին շուկայական գնից ցածր՝ որոշված գումարի կամ տոկոսի չափով: Եթե շուկայական գինը բարձրանում է, ստոպ գինը նույնպես բարձրանում է նույն չափով, իսկ շուկայական գնի նվազման դեպքում ստոպ գինը չի փոփոխվում, և պատվերը կատարվում է, երբ շուկայական գինը հասնում է ստոպ գնին.

***Trailing Stop Limit պատվեր –*** տրամաբանությունը նույն Trailing Stop պատվերի պես է, պարզապես Trailing Stop Limit պատվերը դառնում է լիմիտային պատվեր, երբ շուկայական գինը հասնում է սահմանված ստոպ գնին.

***«Մինչև առևտրային օրվա ավարտը» պայմանով պատվեր՝*** Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ պատվերը ենթակա է կատարման մինչև տվյալ առևտրային նստաշրջանի ավարտը.

***«Մինչև իմ կողմից չեղարկումը» պայմանով պատվեր՝*** Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ Հաճախորդի կողմից տրված պատվերը ուժի մեջ է մինչև Հաճախորդի կողմից դրա չեղարկման հանձնարարականի հաղորդումը.

***«Մինչև _____ ամսաթիվը» պայմանով պատվեր՝*** Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ Հաճախորդի կողմից տրված Պատվերը ենթակա է կատարման մինչև դրանում նշված ամսաթիվը.

***Հանձնարարականի ընդունման էլեկտրոնային գրանցամատյան՝*** Բանկի կողմից վարվող էլեկտրոնային մատյան, որտեղ Բանկը գրանցում է Հաճախորդների կողմից ուղարկված և Բանկի կողմից ի կատարում ընդունված Հանձնարարականների էական պայմանները.

***Գործարքի գրանցման էլեկտրոնային գրանցամատյան՝*** Բանկի կողմից վարվող էլեկտրոնային մատյան, որտեղ Բանկը գրանցում է Հաճախորդի Հանձնարարականի հիման վրա կնքված գործարքի էական պայմանները.

***Առևտրային նստաշրջան՝*** Առևտրային օրվա ժամանակահատված, որի ընթացքում էլեկտրոնային առևտրային համակարգով տվյալ Կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով իրականացվում է արժեթղթերի առևտուր.

***«Առևտրային նստաշրջանի սկզբին» պայմանով պատվեր՝*** Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ պատվերը կատարվում է առևտրային նստաշրջանի բացման առաջին գնով.

***«Overnight» պայմանով պատվեր՝*** Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ պատվերի կատարումը կարող է կատարվել գիշերային նստաշրջանի ընթացքում՝ 20:00-3:50 (տեղական ժամանակով՝ 5:00-12:50): Բնորոշ է ամերիկյան շուկաներին.

***«Overnight + Day» պայմանով պատվեր՝*** Պատվերի ժամանակային պայման, համաձայն որի՝ պատվերի կատարումը կարող է կատարվել գիշերային նստաշրջանի և երկարացված աշխատանքային ժամերի ընթացքում՝ 20:00 - 03:50 (տեղական ժամանակով՝ 05:00 - 12:50 ), 04:00 - 20:00 (տեղական ժամանակով՝ 13:00 - 05:00).

***Հաշվի օպերատոր՝*** Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություն, որը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հետ կնքած պայմանագրով և վերջինիս կանոններով սահմանված իրավասությունների շրջանակներում հաշվետիրոջից կամ իրավասու այլ անձանցից ստացած հանձնարարականները և այլ տեղեկություններ (փաստաթղթերը) փոխանցում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ, վերջինիս միասնական համակարգում այդ գործառնությունների կատարման համար.

***Հաճախորդի միջոցներ՝*** Հաճախորդին պատկանող ՀՀ դրամ, արտարժույթ և արժեթղթեր, որոնցով Բանկը Հաճախորդի կողմից ներկայացված Հանձնարարականների հիման վրա մատուցում է Բրոքերային ծառայություններ, ինչպես նաև այդ ծառայությունների մատուցման արդյունքում ստացված ՀՀ դրամ, արտարժույթ և արժեթղթեր.

***Ծառայողական տեղեկատվություն՝*** Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ Բանկին հայտնի դարձած՝ Հաճախորդի հաշիվների վերաբերյալ որևէ տեղեկատվություն, Հաճախորդի հանձ-

նարարությամբ կամ հօգուտ Հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունը, ինչպես նաև Հաճախորդի առևտրային կամ ծառայողական գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական կամ օգտակար մոդելի մասին տեղեկությունը և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը Հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և Բանկը տեղյակ է եղել կամ պետք է տեղյակ լիներ այդ մտադրության մասին:

Ընթացակարգում օգտագործված այն հասկացությունները, որոնք սահմանված չեն, ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերում, ինչպես նաև համապատասխան Միջազգային շուկաների համար կիրառելի օրենսդրությունում, այլ նորմատիվ իրավական ակտերում և/կամ այդ Միջազգային շուկաներում կարգավորող մարմնի կողմից սահմանված կամ տվյալ Միջազգային շուկաներում ներդրումային գործունեությանը վերաբերող իրավական ակտերում, Առևտրային համակարգում պարտադիր կիրառելի կանոններում, ընթացակարգերում, կանոնակարգերում և ներքին կարգավորումներում սահմանված նշանակությունը:

# ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## ԳԼՈՒԽ 1. ՆԱԽՔԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Բանկը Բրոքերային ծառայություններ է մատուցում ինչպես ՀՀ արժեթղթերի շուկայում, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով թույլատրված միջազգային արժեթղթերի շուկաներում, որտեղ ծառայությունների մատուցումը Բանկի համար տեխնիկապես հնարավոր է: Այդ շուկաների մասին տեղեկատվությունն առկա է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.acba.am:

1.2. Բանկը Բրոքերային ծառայություններ է մատուցում Կարգավորվող և Չկարգավորվող շուկաներում:

1.3. Նախքան Հաճախորդի հետ Պայմանագրի կնքումը՝ Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին տրամադրում է հետևյալ տեղեկությունները/փաստաթղթերը.

1) Բանկի վերաբերյալ տեղեկություններ՝ eFO 75-12-33 (այդ թվում՝ կապի միջոցները, որոնցով Հաճախորդը կարող է կապ հաստատել Բանկի հետ), փաստաթուղթը,

2) Բանկի կողմից մատուցվող Բրոքերային ծառայությունների պայմանների վերաբերյալ հիմնական տեղեկություններ,

3) Արժեթղթերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերի նկարագիր՝ eFO 75-12-34, փաստաթուղթը,

4) Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող ծախսերի և միջնորդավճարների մասին տեղեկություններ,

5) Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Բանկի և հաճախորդի շահերի բախման սահմանափակման և պատվերների ընդունման/կատարման կանոններ՝ eFO 75-12-35, փաստաթուղթը,

6) Բրոքերային ծառայությունների ընդհանուր պայմանները՝ eFO 72-00-680:

1.4. Միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների դեպքում Ընթացակարգի 1.3 կետում նշված տեղեկությունները/փաստաթղթերը Հաճախորդին ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ acba digital ինտերնետ բանկինգ համակարգում և Բանկի ինտերնետային կայքում:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

2.1. Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը, նախքան Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելը, Հաճախորդից ստանում է Բրոքերային ծառայությունների կամ գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի վերաբերյալ նրա փորձի և գիտելիքների մասին տեղեկատվություն, որպեսզի հնարավորինս պարզի, թե արդյոք տվյալ ծառայությունը կամ Արժեթուղթը համապատասխանում են նրա պահանջներին: Այդ տեղեկությունները Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակցին են տրամադրվում Ներդրումային փորձի և գիտելիքների մասին հարցաթերթիկի՝ eFO 75-12-36, միջոցով:

2.2. Եթե Հաճախորդը տալիս է ոչ բավարար տեղեկատվություն կամ հրաժարվում է այն տրամադրելուց, Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը զգուշացնում է Հաճախորդին, որ նրա վարքագիծը թույլ չի տալիս գնահատել Բրոքերային ծառայության կամ արժեթղթի համապատասխանությունը Հաճախորդի պահանջներին:

2.3. Այն դեպքում, երբ Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը գտնում է, որ Բրոքերային ծառայությունը կամ որոշակի Արժեթուղթ չեն համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա նա այդ մասին բանավոր կերպով տեղեկացնում է Հաճախորդին:

2.4. Հաճախորդից ստացված տեղեկատվության հիման վրա Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին դասակարգում է որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ: Պրոֆեսիոնալ հաճախորդի դեպքում՝ Ներդրումային փորձի և գիտելիքների մասին հարցաթերթիկի՝ eFO 75-12-36, միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը կազմում է իր կողմից ստորագրված Հաճախորդին պրոֆեսիոնալ դասակարգելու արձանագրություն՝ eFO 75-12-46, որը ներառում է հաճախորդի գնահատման արդյունքները՝ պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելու պատշաճ հիմնավորմամբ: Ընդ որում՝ Հաճախորդի կողմից պետք է ստորագրվի (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում նաև կնքվի (կնիքի առկայության դեպքում)) պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու համաձայնություն՝ eFO 75-12-37, փաստաթուղթը: Մյուս բոլոր դեպքերում Հաճախորդը համարվում է ոչ պրոֆեսիոնալ:

2.5. Պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելու նկատմամբ պահանջները սահմանվում են Կանոնակարգ 4/07-ով:

2.6. Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդի հետ Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի՝ eFO 72-00-678, կնքումը, Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցն այդ Հաճախորդին գրավոր տեղեկացնում է այն մասին, որ Կանոնակարգ 4/07-ով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու Բանկի և հաճախորդի փոխհարաբերություններում՝ նկարագրելով այդ պահանջների էությունը:

2.7. Պրոֆեսիոնալ համարվող Հաճախորդի նախաձեռնությամբ, կամ եթե առկա է Հաճախորդի համաձայնությունը նաև Բանկի նախաձեռնությամբ, թույլատրվում է Պրոֆեսիոնալ համարվող Հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և տվյալ Հաճախորդի նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:

2.8. Պրոֆեսիոնալ Հաճախորդի հետ Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր՝ eFO 72-00-678, կնքելիս՝ Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը գրավոր հարցում է կատարում տվյալ Հաճախորդին որակավորված ներդրող համարվելու համաձայնության վերաբերյալ: Եթե առկա է Հաճախորդի համաձայնությունը,

ապա վերջինս ստորագրում է Դիլինգի բաժնի պատասխանատու աշխատակցի կողմից տրամադրված Կանոնակարգ 4/06-ի Հավելված 1-ով սահմանված որակավորված ներդրող գրանցվելու դիմումը:

2.9. Պրոֆեսիոնալ Հաճախորդի կողմից ստորագրված որակավորված ներդրող գրանցվելու դիմումը Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակցի կողմից Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի միջոցով ներկայացվում է ՀՀ ԿԲ՝ դիմումը ստորագրվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Սի-Բի-Էյ-Նեթ համակարգին միացված չլինելու դեպքում դիմումը ՀՀ ԿԲ է ներկայացվում ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգերի խափանման դեպքում դիմումը ներկայացվում է մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

2.10. Պրոֆեսիոնալ հաճախորդը, ով ստորագրել է որակավորված ներդրող գրանցվելու դիմումը, Կանոնակարգ 4/06-ով սահմանված գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում գրանցումից դուրս գալու համար ստորագրում և Բանկին է ներկայացնում Կանոնակարգ 4/06-ի Հավելված 2-ով սահմանված Որակավորված ներդրողների տեղեկատվական բազայում գրանցումից հանելու մասին դիմումը: Բանկը ստորագրված դիմումը էլեկտրոնային եղանակով Ընթացակարգի 2.9 կետում նկարագրված ընթացակարգով ներկայացնում է ՀՀ ԿԲ:

2.11. Միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների դեպքում Հաճախորդը Միջազգային շուկայում բրոքերային ծառայություններից օգտվելու Դիմում-Պայմանագրով՝ eFO 72-00-681, համաձայնում է Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Բանկի կողմից դասակարգվել որպես ոչ պրոֆեսիոնալ և Պայմանագրի կնքման պահից դասակարգվում է որպես ոչ պրոֆեսիոնալ, ընդ որում, նշված դասակարգումը վերաբերում է Պայմանագրի հիման վրա մատուցվող բոլոր բրոքերային ծառայություններին:

## ԲԱԺԻՆ 2. ՏԵՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

### ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

3.1. Ընթացակարգի 2-րդ գլխով սահմանված տեղեկությունները ստանալուց հետո, պատասխանատու աշխատակիցն առաջարկում է Հաճախորդին Բանկում բացել Բանկային և Արժեթղթերի/Դեպո հաշիվներ: Բանկում Արժեթղթերի հաշիվը բացվում է համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում հաշվառվող արժեթղթերի պահառության ծառայությունների միջնորդավորման ընթացակարգի՝ ACBA 75 PR 40, Դեպո հաշիվը՝ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ պետական պարտատոմսերի պահառության ընթացակարգի ACBA 75 PR 29, իսկ Ընթացիկ հաշիվը՝ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բանկային հաշիվների սպասարկման ընթացակարգի՝ ACBA 72 PR 01:

3.2. Հաճախորդի անունով անհրաժեշտության դեպքում Բանկային և Արժեթղթերի/Դեպո հաշիվներ բացելուց հետո Բանկի և Հաճախորդի միջև կնքվում է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր՝ eFO 72-00-678:

3.3. Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը, Հաճախորդից ստանալով նրա վերաբերյալ տվյալները, կազմում է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր՝ eFO 72-00-678, երկու օրինակից, որոնք ստորագրվում (կնիքի առկայության դեպքում՝ նաև կնքվում) են Հաճախորդի կողմից, այնուհետև ստորագրվում և կնքվում Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Ֆինանսական տնօրենի, իսկ նրա բացակայության դեպքում Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կամ նրա որևէ տեղակալի կողմից: Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ eFO 72-00-678, կարող է ստորագրվել Բանկի մասնաճյուղի կառավարչի կողմից՝ Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից տրամադրված համապատասխան լիազորագրի առկայության դեպքում:

3.4. Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի՝ eFO 72-00-678, ստորագրումից հետո, Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդի անունով բացում է առանձին թղթապանակ, որտեղ պահվում են տվյալ հաճախորդին Բրոքերային ծառայությունների մատուցման հետ կապված բոլոր փաստաթղթերը:

3.5. Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից Հաճախորդը իրավունք է ստանում Բանկին ներկայացնել Ընթացակարգով նախատեսված Հանձնարարականներ:

3.6. Բանկի հետ Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելիս, իրավաբանական անձ հաճախորդը Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակցին է ներկայացնում իրավաբանական անձի անունից Հանձնարարականներ ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց ցուցակը՝ Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում իրավաբանական անձի կողմից լիազորված անձանց ցուցակ՝ eFO 75-12-38, նրանց ստորագրությունների նմուշները և անձնագրերի պատճենները:

3.7. Բանկի կողմից Բրոքերային ծառայությունների մատուցման համար նախատեսված, ինչպես նաև դրանց արդյունքում ստացված Հաճախորդի դրամական միջոցները, Բանկը հաշվառում է յուրաքանչյուր Հաճախորդի համար առանձին բացված Բանկային հաշվին:

3.8. Բանկի կողմից Բրոքերային ծառայությունների մատուցման համար նախատեսված, ինչպես նաև դրանց արդյունքում ստացված Հաճախորդի արժեթղթերը հաշվառվում են Հաճախորդի անունով բացված և սպասարկվող Արժեթղթերի/Դեպո հաշիվներին:

3.9. Հաճախորդի կողմից հեռախոսով Հանձնարարականների ներկայացնելու ցանկության դեպքում, Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին է տրամադրում Բանկի կողմից գեներացված Գաղտնագրերի թերթիկը՝ eFO 75-12-47, որը պետք է ստորագրվի ինչպես Հաճախորդի, այնպես էլ Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Ֆինանսական տնօրենի, իսկ նրա բացակայության դեպքում Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կամ նրա որևէ տեղակալի կողմից:

3.10. Acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով բրոքերային ծառայություններից օգտվելու դեպքում հաճախորդը, մուտք գործելով acba digital ինտերնետ բանկինգ համակարգի «Ներդրումներ» մասի «Բրոքերային հայտեր» բաժին և սեղմելով «Գնել արժեթուղթ» կոճակը, հնարավորություն ունի նախքան գնման հայտ ուղարկելն ուսումնասիրել արժեթղթերի շուկան, և ընտրելով իր նախընտրելի արժեթուղթը՝ ուղարկել գնման հայտ: Վաճառքի հայտ ուղարկելու դեպքում, հաճախորդը մուտք է գործում «Ներդրումներ» մասի «Իմ արժեթղթեր» բաժին և, ընտրելով իր մոտ առկա արժեթուղթը, ուղարկում է վաճառքի հայտը:

3.10.1. Այն դեպքում, երբ հայտը ներկայացնող հաճախորդը չունի ակտիվ կարգավիճակով արժեթղթերի հաշիվ, ապա acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով համապատասխան հաստատումները ստանալուց հետո ավտոմատ կերպով բացվում է արժեթղթերի հաշիվ: Արժեթղթերի հաշվի բացվելուց հետո, պատասխանելով համապատասխան հարցաշարին՝ կնքվում է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի էլեկտրոնային օրինակն ուղարկվում է հաճախորդի էլեկտրոնային հասցեին:

3.10.2. Acba digital ինտերնետ բանկինգ համակարգում հայտը ներկայացնող հաճախորդի հաշվին բաժնետոմսերի ձեռքբերման համար պահանջվող գումարի և միջնորդավճարի բացակայության դեպքում գործընթացն ավարտվում է այդ փուլում, իսկ առկայության դեպքում հայտը հաստատվում է, և գումարը փոխանցվում համապատասխան տարանցիկ հաշվին:

## ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Բանկը վարում է Հաճախորդի Բանկային և Արժեթղթերի/Դեպո հաշիվների այնպիսի հաշվառում, որը թույլ է տալիս ցանկացած պահի Հաճախորդի միջոցներն առանձնացնել այլ Հաճախորդների և Բանկի սեփական միջոցներից:

4.2. Ընդհանուր առմամբ, ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով, Բանկը կարող է համախմբել Հաճախորդի Հանձնարարականը կամ իր հաշվին կատարվող գործարքն իր՝ մեկ այլ Հաճախորդի Հանձնարարականի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե.

1) որևէ Հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա Հանձնարարականը կատարվեր առանձին,

2) ընդհանուր առմամբ այն բխում է Հաճախորդի շահերից:

4.3. Եթե Բանկը Հաճախորդի Հանձնարարականը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքների հետ, ապա այդ համախմբված Հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում է Հաճախորդին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

## ԳԼՈՒԽ 5. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքներ իրականացնելու համար անհրաժեշտ է դրամական միջոցների դեպոնացում և/կամ արժեթղթերի առևտրային արգելադրում, որի նպատակով, նախքան Հաճախորդի կողմից Արժեթղթերի գնման/վաճառքի հանձնարարական ներկայացնելը, Հաճախորդը էլեկտրոնային կամ թղթային եղանակով Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակցին է ներկայացնում պատշաճ կերպով լրացված Դրամական միջոցների դեպոնացման և արժեթղթերի առևտրային արգելադրման դիմումը eFO 75-12-39:

5.2. Դրամական միջոցների դեպոնացման դեպքում Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդից ստացված Դրամական միջոցների դեպոնացման և արժեթղթերի առևտրային արգելադրման դիմումը Brokerage@acba.am հասցեից ուղարկում է Արտաքին գործառնությունների և հաշվարկների բաժնի պետի իրավասու էլեկտրոնային հասցեին, որն էլ, իր հերթին, անհապաղ միջոցներ է ձեռնարկում համապատասխան հաշվապահական ձևակերպումներ իրականացնելու և դրամական միջոցները դեպոնացնելու ուղղությամբ:

5.3. Արժեթղթերի առևտրային արգելադրումն իրականացվում է հետևյալ սկզբունքով՝

1) ՀՀ պետական պարտատոմսերի առևտրային արգելադրման դեպքում Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդի կողմից ստացված Դրամական միջոցների դեպոնացման և արժեթղթերի առևտրային արգելադրման դիմումը Brokerage@acba.am իրավասու էլեկտրոնային հասցեից ուղարկում է Դիլինգի բեք օֆիսի բաժնի իրավասու էլեկտրոնային հասցեին՝ dealing.backoffice@acba.am, վերջինս, ստանալով այն, անհապաղ կազմում է արժեթղթերի Ազատ առաքման հանձնարարական (ՀՏ522)՝ Հաճախորդի հաշվից պետական պարտատոմսերը Կարգավորվող շուկա փոխանցելու համար և ներկայացնում Արտաքին գործառնությունների և հաշվարկների բաժնին, վերջինս էլ, ստանալով արժեթղթերի Ազատ առաքման հանձնարարականը, անհապաղ քայլեր է ձեռնարկում այն Կարգավորվող շուկայում արգելադրելու համար:

2) «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվառման միասնական համակարգում հաշվառված արժեթղթերի առևտրային արգելադրման դեպքում Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդի կողմից ստացված Դրամական միջոցների դեպոնացման և արժեթղթերի առևտրային արգելադրման դիմումը՝ eFO 75-12-39, Brokerage@acba.am իրավասու էլեկտրոնային հասցեից ուղարկում է Դիլինգի բեք օֆիսի բաժնի իրավասու էլեկտրոնային հասցեին՝ dealing.backoffice@acba.am, որի հիման վրա վերջինս անհապաղ քայլեր է ձեռնարկում բորսայում համապատասխան արժեթղթերը Depend համակարգով արգելադրելու համար:

5.4. Հաճախորդը Բանկին Դրամական միջոցների դեպոնացման և արժեթղթերի առևտրային արգելադրման դիմումը՝ eFO 75-12-39, կարող է ներկայացնել ցանկացած աշխատանքային օր (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանվող տոնի և հիշատակի օրերի)՝ Բանկի աշխատանքային ժամերին, իսկ Բանկը դեպոնացումը և առևտրային արգելադրում իրականացնում է տվյալ Կարգավորվող շուկայի գործառնական ժամերին:

## ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից Ընթացակարգով սահմանված համապատասխան լրացված և թղթային, կամ էլեկտրոնային եղանակով կամ հեռախոսով կամ acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակցին ներկայացված Հանձնարարականը:

6.2. Արժեթղթերի երկրորդային շուկայում գործարքներ կնքելու համար Հաճախորդը Բանկին պետք է ներկայացնի Ընթացակարգով նախատեսված Արժեթղթերի առքի/վաճառքի հանձնարարականը՝ eFO 75-12-40, իսկ առաջնային շուկայի դեպքում՝ Արժեթղթերի գնման/վաճառքի հանձնարարականը՝ eFO 75-12-41:

6.3. Հաճախորդը Բանկին Հանձնարարական կարող է ներկայացնել ցանկացած աշխատանքային օր (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանվող տոնի և հիշատակի օրերի)՝ Բանկի աշխատանքային ժամերին, իսկ Բանկը գործարքները կնքում է տվյալ Կարգավորվող շուկայի կողմից սահմանված առևտրային նստաշրջանի ընթացքում:

6.4. Հաճախորդի կողմից թղթային եղանակով Հանձնարարականը ներկայացնելու դեպքում Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը ստուգում է Հանձնարարականը ներկայացնող անձի լիազորությունները: Հանձնարարականը ներկայացնող անձի լիազորությունների անհամապատասխանության դեպքում Հանձնարարականը վերադարձվում է տվյալ անձին:

6.5. Հաճախորդի կողմից թղթային եղանակով Հանձնարարականը Բանկին ներկայացվում է երկու օրինակից, ընդ որում՝ Հանձնարարականի մեկ օրինակը մնում է Բանկում, իսկ մյուս օրինակը Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ և «Ընդունված է ____ ժամին» նշագրումով վերադարձվում է Հաճախորդին:

6.6. Հաճախորդի կողմից էլեկտրոնային եղանակով Հանձնարարականը ներկայացնելու դեպքում, Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին ուղարկում է Հանձնարարականի ընդունման կամ մերժման մասին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն:

6.7. Հաճախորդը կարող է Հանձնարարականն էլեկտրոնային եղանակով ներկայացնել միայն Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրում՝ eFO 72-00-678, նշված Բանկի իրավասու հասցեին, իր իրավասու հասցեից:

6.8. Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին պարտավոր է տեղեկացնել, որ էլեկտրոնային եղանակով Հանձնարարականների ընդունման դեպքում Բանկից անկախ տեխնիկական և այլ պատճառներով Հաճախորդի կողմից ուղարկված և Բանկին չհասած Հանձնարարականից կրած վնասների համար՝ Բանկը պատասխանատվություն չի կրում:

6.9. Հեռախոսով Հանձնարարականների ընդունման դեպքում Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը կարող է Հաճախորդին նույնականացնելու համար վերջինիս ուղղել հարցեր Հաճախորդի հետ կնքված բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի վավերապայմանների (համար, կնքման ամսաթիվ և

այլն), ինչպես նաև Բանկի կողմից Հաճախորդին տրամադրված Գաղտնագրերի թերթիկից՝ eFO 75-12-47, մեկ կամ մի քանի գաղտնագրերի վերաբերյալ:

6.10. Հաճախորդին նույնականացնելուց հետո Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցն ընդունում է Հանձնարարականը, կրկնում է գործարքի բոլոր էական պայմանները, որից հետո Հաճախորդը հաստատում է դրանք: Հանձնարարականը համարվում է ընդունված Դիլինգի բաժնի պատասխանատու աշխատակցի կողմից արտասանված և Հաճախորդի կողմից հաստատված պայմաններով:

6.11. Acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով առքի կամ վաճառքի հայտ ուղարկելուց հետո, «Front Office» ծրագրի «Արժեթղթերի հաշվառում» բաժնում ձևավորվում է բրոքերային հայտ, որը հաստատում է Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը: Առքի հայտի դեպքում Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի կողմից հայտն ընդունելուց հետո, ձևավորվում է BANK MAIL փոխանցում, որն իրականացվում է Արտաքին գործառնությունների և հաշվարկների բաժնի կողմից, այնուհետև Դիլինգի բեք օֆիսի թիմը դեպոնացնում է հաճախորդի դրամական միջոցները, իսկ վաճառքի հայտի դեպքում՝ արժեթղթերը՝ համաձայն Ընթացակարգի 5-րդ գլխի:

6.12. Ժամը 14:00-ից հետո ներկայացված հանձնարարականները Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակցի կողմից մշակվում են հաջորդ աշխատանքային օրը:

6.13. Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդի Հանձնարարականի կատարումը հետևյալ դեպքերում՝

1) Հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի անհամապատասխանության կամ Հաճախորդին նույնականացնելու հիմնավոր կասկածի դեպքում կամ եթե Հաճախորդը իրավասու չէ ներկայացնել այդպիսի Հանձնարարական.

2) եթե Հանձնարարականը Բանկին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է Հաճախորդի իրավասու էլեկտրոնային հասցեից տարբերվող այլ հասցեից.

3) Ընթացակարգով սահմանված ձևով Հանձնարարականի ոչ պատշաճ (օրինակ՝ թերի կամ ջնջումներով) լրացման և ներկայացման դեպքում.

4) Հաճախորդի Բանկային և Արժեթղթերի/Դեպո հաշիվներին ոչ բավարար միջոցների առկայության դեպքում.

5) Հանձնարարականում նշված պայմանների՝ ՀՀ օրենսդրության և Ընթացակարգի պայմանների հետ անհամապատասխանության դեպքում.

6) եթե Հանձնարարականի կատարումը տեխնիկապես անհնար է,

7) եթե acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով հաճախորդի ներկայացրած հայտի վավերապայմանները ոչ իրատեսական են ՀՀ ֆոնդային բորսայում գործարք իրականացնելու համար:

6.14. Հանձնարարականի մերժման դեպքում, Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հանձնարարականի մերժման ծանուցման՝ eFO 75-12-42, միջոցով անհապաղ տեղյակ է պահում Հաճախորդին՝ կապի հասանելի միջոցներով:

6.15. Acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով ներկայացված հայտը մերժելու դեպքում հաճախորդը ծանուցվում է acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով:

6.16. Հաճախորդի կողմից նախկինում ներկայացված Հանձնարարականը կարող է կասեցվել Հաճախորդի կողմից ներկայացված Հանձնարարականի կասեցման դիմումի՝ eFO 75-12-43 կամ acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով ուղարկված չեղարկման դիմումի համաձայն: Հաճախորդի ներկայացրած Կասեցման/Չեղարկման դիմումը, Բանկի կողմից ընդունվում է ի կատարում, եթե տվյալ Հանձնարարականով Բանկը դեռևս գործարք չի իրականացրել, իրականացրել է մասնակի կամ տվյալ գործարքի իրականացման նպատակով երրորդ անձանց հետ ձեռք չի բերվել

գործարքի իրականացման համապատասխան պայմանավորվածություն: Հաճախորդի Հանձնարարականի հիման վրա մասնակի կնքված գործարքի դեպքում Բանկը Հաճախորդի Կասեցման/Չեղարկման դիմումը ընդունում է ի կատարում, Հանձնարարականի միայն չկատարված մասի չափով:

6.17. Հաճախորդի կողմից ներկայացված Հանձնարարականի տեսակը նշված չլինելու դեպքում այն համարվում է Շուկայական պատվեր, իսկ վավերության ժամկետը նշված չլինելու դեպքում այն վավեր է մինչև տվյալ արժեթղթի առաջիկա առևտրային նստաշրջանի ավարտը:

## ԳԼՈՒԽ 7. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՈՒՄԸ

7.1. Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը, ընդունելով Հաճախորդի Հանձնարարականը և հետևելով Հանձնարարականում նշված ցուցումներին, անհապաղ քայլեր է ձեռնարկում գործարքը համապատասխան շուկայում իրականացնելու համար: Առանձին դեպքերում, հաճախորդների շահերից ելնելով, հանդիպակաց հայտի առկայության դեպքում, Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը կարող է հետաձգել պատվերի կատարումը, եթե վերջինիս կարծիքով այդ պահին պատվերի կատարման հետաձգումը կհանգեցնի ավելի լավ արդյունքի:

7.2. Գործարքներն իրականացվում են ըստ հանձնարարականների ստացման հերթականության:

7.3. Կարգավորվող շուկայում գործարքները կնքվում են Բանկի կողմից տվյալ բորսայական շուկայում կազմակերպվող առևտրի ընթացքում՝ արժեթղթերի առքի/վաճառքի առաջարկություն ներկայացնելու միջոցով, ընդ որում՝ Կարգավորվող շուկայում գործարքները կնքվում են տվյալ շուկայի կանոնների համաձայն:

7.4. Կարգավորվող շուկայում գործարքի կնքումից հետո, բայց ոչ ուշ, քան տվյալ օրվա ժամը 16:00-ն, Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը կազմում է Արժեթղթերի առքի/վաճառքի տոմս՝ eFO 75-12-44, և Brokerage@acba.am իրավասու էլեկտրոնային հասցեից ուղարկում է Դիլինգի բեք օֆիսի բաժնի իրավասու էլեկտրոնային հասցեին՝ dealing.backoffice@acba.am: Արժեթղթերի առքի/վաճառքի տոմսի հիման վրա Դիլինգի բեք օֆիսի բաժնի աշխատակիցը կազմում է ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվություններ, ինչպես նաև պետական պարտատոմսերի դեպքում իրականացնում է արժեթղթերի հաշվառում Բանկի «Securities» ծրագրում:

7.5. Acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով ուղարկված առքի/վաճառքի հայտի հիման վրա Կարգավորվող շուկայում գործարքի կնքումից հետո Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի աշխատակիցը գործարքի մանրամասները մուտքագրում է «Front Office» ծրագիր:

7.6. Հաճախորդի Հանձնարարականը կատարելու նպատակով Բանկը իրավունք ունի հաճախորդի Հանձնարարականը փոխանցել այլ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կատարմանը, ինչպես նաև օգտագործել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից առաջարկվող էլեկտրոնային առևտրային համակարգերը:

## ԳԼՈՒԽ 8. ՉԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՈՒՄԸ

8.1. Չկարգավորվող շուկայում գործարքներ կնքելու համար Հաճախորդը Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակցին էլեկտրոնային կամ թղթային եղանակով ներկայացնում է Հանձնարարական՝ համապատասխան դաշտում Չկարգավորվող շուկա նշումով:

8.2. Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը, ստանալով Հանձնարարականը, անհապաղ քայլեր է ձեռնարկում Հաճախորդի համապատասխան հաշվին դրամական միջոցների կամ արժեթղթերի առկայության ստուգման ուղղությամբ:

8.3. Դրամական միջոցների կամ համապատասխան արժեթղթերի բացակայության դեպքում, Բանկի Պատասխանատու աշխատակիցը Հանձնարարականի մերժման ծանուցման միջոցով անհապաղ տեղյակ է պահում Հաճախորդին՝ կապի հասանելի միջոցներով:

8.4. Միջոցների առկայության դեպքում Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը քայլեր է ձեռնարկում Հաճախորդի Հանձնարարականի կատարման ուղղությամբ, որի համար հարցումներ է իրականացնում Բանկի այլ Հաճախորդների և/կամ արժեթղթերի շուկայի այլ մասնակիցների մոտ՝ հանդիպակաց առաջարկների վերաբերյալ:

8.5. Հանդիպակաց առաջարկը գտնելու դեպքում Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը ձեռք է բերում գործարքի կնքման պայմանավորվածություն, որի հիման վրա կազմում է Արժեթղթերի առքի/վաճառքի տոմս՝ eFO 75-12-44, և Brokerage@acba.am հասցեից ուղարկում Դիլինգի բեք օֆիսի բաժնի իրավասու հասցեին՝ dealing.backoffice@acba.am:

8.6. Արժեթղթերի առքի/վաճառքի տոմսը՝ eFO 75-12-44 հիմք է հանդիսանում Դիլինգի բեք օֆիսի թիմի աշխատակցի համար երկու օրինակից կազմելու Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի հավելված արժեթղթի առք ու վաճառքի պայմանագիր՝ eFO 72-00-677: Բանկի կողմից Գործակալության պայմանագիրը ստորագրում է Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Ֆինանսական տնօրենը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Գլխավոր գործադիր տնօրենը կամ նրա տեղակալներից որևէ մեկը, իսկ հանդիպակաց կողմից՝ ստորագրելու իրավասություն ունեցող համապատասխան անձը:

8.7. Դիլինգի բեք օֆիսի բաժնի աշխատակիցը ստորագրված և կնքված Գործակալության պայմանագրի Բանկի օրինակը ներկայացնում է Արտաքին գործառնությունների և հաշվարկների բաժին՝ համապատասխան փոխանցումները և հաշվապահական ձևակերպումները իրականացնելու համար:

8.8. Արժեթղթերի միասնական համակարգում գրանցված արժեթղթերով վաճառքի գործարքի դեպքում փոխանցումներն իրականացնում է Դիլինգի բեք օֆիսի բաժնի աշխատակցի՝ Depend համակարգով:

## ԳԼՈՒԽ 9. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

9.1. Բանկի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդից Հանձնարարականն ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան տվյալ օրվա ավարտը, Հանձնարարականների ընդունման էլեկտրոնային գրանցամատյանում լրացնում է տվյալ Հանձնարարականի հետ կապված էական պայմանները հետևյալ հաջորդականությամբ՝

1) Հաճախորդի անունը, ազգանունը/անվանումը,
2) Հանձնարարականի հերթական համարը,
3) Հանձնարարականում նշված գործարքի տեսակ (առք/վաճառք),
4) Հանձնարարականի տեսակը,
5) Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը,
6) Արժեթղթերի քանակը,
7) Արժեթղթի միավորի գինը,
8) Գործարքի ընդհանուր ծավալը,
9) Գործարքի մյուս կողմը,
10) Հանձնարարականի ներկայացման ստույգ ժամանակը հետևյալ հաջորդականությամբ՝ տարի/ամիս/օր/ժամ/րոպե,
11) Հանձնարարականի հետ կապված առանձնահատուկ ցուցումներ
12) Հանձնարարականը գրանցող շահագրգիռ անձի անունը
13) Հանձնարարականի կասեցման դիմումի հերթական համարը (առկայության դեպքում),

14) Հանձնարարականի կասեցման դիմումի ստացման ստույգ ժամանակը հետևյալ հաջորդականությամբ՝ տարի/ամիս/օր/ժամ/րոպե (առկայության դեպքում),

15) Հանձնարարականի կասեցման ծավալը (առկայության դեպքում),

9.2. Հանձնարարականի կատարումից հետո Արժեթղթերով և փողի շուկայում գործառնություններ բաժնի պատասխանատու աշխատակիցը գործարքի էական պայմանները մուտքագրում է Գործարքի գրանցման էլեկտրոնային գրանցամատյանում, ոչ ուշ, քան գործարքի կնքման օրվա ավարտը, հետևյալ հաջորդականությամբ՝

16) Հաճախորդի անունը, ազգանունը/անվանումը,

17) Հանձնարարականի հերթական համարը,

18) Գործարքի կատարման ստույգ ժամանակը հետևյալ հաջորդականությամբ՝ տարի/ամիս/օր/ժամ/րոպե,

19) Գործարքի տեսակը (առք/վաճառք),

20) Արժեթղթերի ծածկագիրը,

21) Թողարկողի անվանումը,

22) Արժեթղթերի քանակը,

23) Արժեթղթի միավորի գինը,

24) Գործարքի ընդհանուր ծավալը,

25) Գործարքի մյուս կողմը,

26) Գործարքի կնքման վայրը,

27) Գանձվող միջնորդավճարի չափը,

28) Գործարքը կնքող շահագրգիռ աշխատակցի անունը:

9.3. Acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով ստացված հայտերի և դրանց հիման վրա կատարված գործարքների դեպքում էլեկտրոնային գրանցամատյանը վարվում է «Front Office» ծրագրում:

## ԳԼՈՒԽ 10. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

10.1. Արժեթղթերով և փողի շուկայում գործառնություններ բաժնի պատասխանատու աշխատակիցը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով (Հաճախորդի պահանջի դեպքում)՝ Հաճախորդին է ներկայացնում գործարքի մասին հաշվետվություն՝ eFO 75-12-45 (ըստ յուրաքանչյուր գործարքի):

10.2. Բանկի կողմից գործարքի կատարման դեպքում, ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը կազմում է Գործարքի մասին հաշվետվություն՝ eFO 75-12-45: Գործարքի մասին հաշվետվությունը ստորագրում է Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Ֆինանսական տնօրենը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Բանկի գլխավոր գործադիր տնօրենը կամ նրա որևէ տեղակալ կամ՝ համապատասխան լիազորագրի առկայության դեպքում՝ Դիլինգի վարչության պետը: Գործարքի մասին հաշվետվությունը՝ eFO 75-12-45, կարող է ստորագրվել Բանկի մասնաճյուղի կառավարչի կողմից՝ Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից տրամադրված համապատասխան լիազորագրի առկայության դեպքում:

10.3. Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը ստորագրված և կնքված Գործարքի մասին հաշվետվությունը Brokerage@acba.am իրավասու էլեկտրոնային հասցեից ուղարկվում է Արտաքին գործառնությունների և հաշվարկների բաժնի պետի էլեկտրոնային հասցեին, վերջինս էլ, ստանալով հաշվետվությունը, կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումները ոչ ուշ, քան տվյալ օրվա ավարտը:

10.4. 20 մլն ՀՀ դրամ և ավելի կնքված գործարքի դեպքում, Դիլինգի բեք օֆիսի բաժնի պատասխանատու աշխատակիցը, ոչ ուշ, քան Գործարքի կատարման օրվա ավարտը, ՓԼԱՖ դեմ պայքարի և սանկցիաների տնօրինությանն է տրամադրում հաշվետվություն՝ համաձայն ԱԿԲԱ

ԲԱՆԿԻ ԽՄԲԻ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և միջազգային սանկցիաների պահպանման կարգ՝ GROUP ORD 01:

10.5. Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Գործարքի մասին հաշվետվությունը Հաճախորդին է ներկայացնում ոչ ուշ, քան գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

## ԲԱԺԻՆ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

### ԳԼՈՒԽ 11. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

11.1. Միջազգային շուկայում բրոքերային և արժեթղթերի հաշվի բացումը իրականացվում է acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով:

11.2. Միջազգային շուկայում գործարքներ իրականացնելու հնարավորություն ունեն միայն ֆիզիկական անձինք, ովքեր միաժամանակ հանդիսանում են ՀՀ քաղաքացի և ՀՀ ռեզիդենտ:

11.3. Նախքան բրոքերային/արժեթղթերի հաշիվ բացելը և պայմանագրերի կնքումը, հաճախորդը լրացնում է հաշվի բացման անհրաժեշտ տեղեկատվությունը և իր փորձի և գիտելիքների մասին լրացուցիչ հարցաշարը:

11.4. Հարցաշարը լրացնելուց հետո, հաճախորդի դիմումը ուղարկվում է դիտարկման, որը կարող է տևել մինչև մեկ աշխատանքային օր: Դիմումի դիտարկման փուլում հնարավոր է առաջանան հավելյալ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտություն, որի ժամանակ Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը կապվում է հաճախորդի հետ և տեղեկացնում հավելյալ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտության մասին: Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը, ստանալով հաճախորդից տվյալ փաստաթուղթը brokerage@acba.am էլ. հասցեին, մուտքագրում է անհրաժեշտ փաստաթուղթը Հարթակում: Հաճախորդից մերժում ստանալու դեպքում, գործընթացը դադարում է տվյալ փուլում:

11.5. Նախքան «Կնքել պայմանագրերը» հրահանգը սեղմելը, հաճախորդը կարող է ծանոթանալ Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Բանկի և հաճախորդի շահերի բախման սահմանափակման և պատվերների ընդունման/կատարման կանոններին՝ eFO 75-12-35, Արժեթղթերում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերի նկարագրին ՝ eFO 75-12-34, Բանկի վերաբերյալ տեղեկություններին՝ eFO 75-12-33, Միջազգային շուկայում բրոքերային ծառայություններից օգտվելու դիմում-պայմանագրին՝ eFO 72-00-681, և Օտարերկրյա արժեթղթերի պահառության ծառայություններից օգտվելու դիմում-պայմանագրին՝ eFO 72-00-682:

11.6. Հաշվի բացումը չհաստատվելու դեպքում, հաճախորդը ստանում է մերժման վերաբերյալ հաղորդագրություն:

11.7. Հաշվի բացումը հաստատվելու դեպքում, հաճախորդը ստանում է հաստատման վերաբերյալ հաղորդագրություն, և իր էլ. հասցեին ուղարկվում են կնքված Միջազգային շուկայում բրոքերային ծառայություններից օգտվելու դիմում-պայմանագիրը՝ eFO 72-00-681, և Օտարերկրյա արժեթղթերի պահառության ծառայություններից օգտվելու դիմում-պայմանագիրը՝ eFO 72-00-682:

11.8. Միջազգային շուկայում բրոքերային ծառայություններ մատուցող մասնագիտացված անձանց մոտ հաճախորդի համար բացվում է մեկ հաշիվ մեկ միասնական նույնականացման կոդով, որը հանդիսանում է որպես բրոքերային և արժեթղթերի հաշիվ: Տվյալ հաշիվը բազմարժութային է, սակայն որպես հիմնական արժույթ ընտրված է ԱՄՆ դոլարը, ինչը ենթադրում է, որ հաճախորդի հաշվին առկա՝ այլ արժույթներով արտահայտված դրամական միջոցներն ու արժեթղթերը, ցուցադրվելու են նաև դոլարային համարժեքով, ինչպես նաև տվյալ հաշվին դրամական միջոցների

մուտքագրումն ու ելքագրումը կատարվելու է ԱՄՆ դոլարով:

11.9. Բանկը վարում է Հաճախորդի բանկային և արժեթղթերի հաշիվների այնպիսի հաշվառում, որը թույլ է տալիս ցանկացած պահի Հաճախորդի միջոցներն առանձնացնել այլ Հաճախորդների և Բանկի սեփական միջոցներից:

## ԳԼՈՒԽ 12. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ/ԱՊԱԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Նախքան Հարթակով Հանձնարարականի ներկայացումը Բանկին, Հաճախորդը պարտավոր է իր Բրոքերային հաշվին ապահովել Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցները կամ Արժեթղթերի հաշվին՝ Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ Արժեթղթերը:

12.2. Դրամական միջոցների դեպոնացման համար Հաճախորդը, acba digital ինտերնետ բանկինգ համակարգով մուտք գործելով իր «Միջազգային հաշիվ» բաժինը, ընտրում է «Համալրել» հրահանգը և ընտրելով համապատասխան հաշիվը, որից ցանկանում է իրականացնել բրոքերային հաշվի համալրում՝ լրացնում է անհրաժեշտ գումարը: Եթե հաճախորդը Բանկում չունի որևէ հաշիվ, ապա գործարքը տվյալ փուլում դադարում է: Գործարքը շարունակելու համար Հաճախորդը պետք է բացի Բանկային հաշիվ՝ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բանկային հաշիվների սպասարկման ընթացակարգի՝ ACBA 72 PR 01:

12.3. Դրամական միջոցների ապադեպոնացման համար Հաճախորդը, acba digital ինտերնետ բանկինգ համակարգով մուտք գործելով իր «Միջազգային հաշիվ» բաժինը, ընտրում է «Ելքագրել» հրահանգը և ընտրելով համապատասխան հաշիվը, որին ցանկանում է փոխանցել գումարը՝ լրացնում է անհրաժեշտ գումարը: Միջոցների անբավարար լինելու դեպքում Հաճախորդը ստանում է հաղորդագրություն և գործարքը տվյալ փուլում դադարում է:

12.4. Դրամական միջոցների մուտքագրումն ու ելքագրումը կատարվում է ԱՄՆ դոլար արժույթով: ՀՀ դրամ կամ այլ արժույթով Բանկային հաշվից մուտքագրում կամ ելքագրում իրականացնելու ժամանակ կատարվում է փոխարկում համաձայն տվյալ պահին Բանկում գործող փոխարժեքի:

12.5. Դրամական միջոցների մուտքագրման ու ելքագրման գործընթացի իրականացումը կարող է տևել մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

## ԳԼՈՒԽ 13. ՀԱՐԹԱԿՈՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔԻ/ՎԱՃԱՌՔԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Հաճախորդը արժեթղթերի առքի/վաճառքի հանձնարարականները ներկայացնում է Հարթակի միջոցով:

13.2. Հանձնարարականները Հարթակով Բանկին ներկայացնելու պահին տվյալ Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ միջոցների չափով սառեցվում են Հաճախորդի Բրոքերային հաշվին առկա դրամական միջոցները կամ Հաճախորդի Արժեթղթերի հաշվին առկա՝ վաճառքի ենթակա Արժեթղթերը:

13.3. Հաճախորդի Հանձնարարականը կատարվելուց անմիջապես հետո կատարվում է փոխհաշվարկ, և Բրոքերային հաշվից անակցեպտ գանձվում են Հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցները կամ Հաճախորդի Արժեթղթերի հաշվին առկա՝ վաճառքի ենթակա Արժեթղթերը:

13.4. Հաճախորդի կողմից ԱՄՆ դոլարից տարբերվող արժույթով արժեթղթերի առքի Հանձնարարական ներկայացնելու դեպքում Հարթակում կատարվում է ավտոմատ փոխարկում գործարքի համար անհրաժեշտ գումարի և բրոքերային միջնորդավճարի չափով:

13.5. Հաճախորդի կողմից ԱՄՆ դոլարից տարբերվող արժույթով արժեթղթերի վաճառքի Հանձնարարական ներկայացնելու դեպքում, արժեթղթի վաճառքից գոյացած գումարը փոխանցվում է Հաճախորդի բրոքերային հաշվին գործարքի արժույթով, որը Հաճախորդը ցանկացած պահի կարող է փոխարկել ԱՄՆ դոլարի:

13.6. Հաճախորդի կողմից Հանձնարարականը չեղարկելու, Բանկի կողմից Հանձնարարականը չընդունելու և/կամ ի կատարումն չհաղորդելու դեպքերում Բրոքերային հաշվում սառեցված միջոցները համապատասխան չափով ապասառեցվում են:

13.7. Հաճախորդը կարող է Հարթակում խմբագրել իր կողմից ներկայացրած Հանձնարարականը:

13.8. Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդի Հանձնարարականի ընդունումը և/կամ ի կատարումն չհաղորդել այն, եթե,

13.8.1. ներկայացվել է Հաճախորդին կամ նրա իրավասու ներկայացուցչին չպատկանող անձը հաստատող փաստաթուղթ կամ Հաճախորդն իրավասու չէ ներկայացնել այդպիսի Հանձնարարական կամ Բանկն ունի կասկածներ Հաճախորդին նույնականացնող փաստաթղթերի կամ վերջինիս վերաբերյալ այլ տվյալների արժանահավատության հետ կապված,

13.8.2. ներկայացվել է ոչ պատշաճ լրացված Հանձնարարական,

13.8.3. Հաճախորդի Բրոքերային հաշվին բավարար միջոցներ առկա չեն Հանձնարարականի կատարման համար,

13.8.4. Հաճախորդը չի կատարել Պայմանագրով ստանձնած իր որևէ պարտավորություն:

13.8.5. Բանկը տվյալ պահին զրկված է Հանձնարարականներն ընդունելու և ի կատարումն հաղորդելու հնարավորություններից ցանկացած պատճառով, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, հետևյալ դեպքերում. ծրագրային խափանում, Գործակալների հետ համագործակցության բացակայություն կամ դադարեցում, վերջիններիս կողմից Հանձնարարականների ընդունումից հրաժարում:

## ԳԼՈՒԽ 14. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՈՒՄԸ

14.1. Հարթակի միջոցով Հաճախորդը հասանելիություն է ստանում և կարող է գործարքներ իրականացնել ամերիկյան, եվրոպական և ասիական մի շարք բորսաներում:

14.2. Կարգավորվող շուկայում գործարքները կնքվում են Բանկի կողմից տվյալ բորսայական շուկայում կազմակերպվող առևտրի ընթացքում՝ արժեթղթերի առքի/վաճառքի առաջարկություն ներկայացնելու միջոցով, ընդ որում՝ Կարգավորվող շուկայում գործարքները կնքվում են տվյալ շուկայի կանոնների համաձայն:

14.3. Ամերիկյան շուկայի առևտրային նստաշրջանը տևում է 09:30 - 16:00 (տեղական ժամանակով՝ 17:30-24:00), եվրոպական շուկայինը՝ 09:00-17:30 (տեղական ժամանակով՝ 11:00-19:30), ասիականը՝ 10:00-17:00 (տեղական ժամանակով՝ 05:00-12:00): Տեղական ժամանակով նշված ժամերը կարող են փոփոխվել տարվա մեջ երկու անգամ կապված ամառային և ձմեռային ժամերի փոփոխության հետ:

14.4. Գործարքի կատարման/մասնակի կատարման/մերժման վերաբերյալ տեղեկատվություն Հաճախորդը ստանում է Հարթակի միջոցով:

14.5. Կատարված գործարքները չեղարկել հնարավոր չէ:

14.6. Հաճախորդը իր պորտֆելի մասին տվյալները տեսնում է և Հարթակում, և acba digital ինտերնետ բանկինգ համակարգի իր Միջազգային հաշիվ բաժնում:

## ԳԼՈՒԽ 15. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15.1. Հարթակի միջոցով ստացված հայտերի և դրանց հիման վրա կատարված գործարքների դեպքում էլեկտրոնային գրանցամատյանը վարվում է «Front Office» ծրագրում:

15.2. Յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 16:00 ստանալով գործարքների վերաբերյալ հաշվետվությունը, ավտոմատ «Front Office» են մուտքագրվում՝

15.2.1. Հաճախորդից ընդունված Հանձնարարականի հետ կապված հետևյալ էական պայմանները.

1) Հաճախորդի անունը, ազգանունը,
2) Բորսայական կոդը,
3) Հանձնարարականի հերթական համարը,
4) Հանձնարարականում նշված գործարքի տեսակը (առք/վաճառք),
5) Հանձնարարականի տեսակը,
6) Արժեթղթի տեսակը,
7) Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը,
8) Արժեթղթի արժույթը,
9) Արժեթղթերի քանակը,
10) Արժեթղթի միավորի գինը,
11) Ժամանակային պայմանը,
12) Գործարքի ընդհանուր ծավալը,
13) Գործարքի մյուս կողմը,
14) Հանձնարարականի ներկայացման ստույգ ժամանակը հետևյալ հաջորդականությամբ՝ տարի/ամիս/օր/ժամ/րոպե:

15.2.2. Կատարված գործարքի վերաբերյալ հետևյալ էական պայմանները.

1) Հաճախորդի անունը, ազգանունը
2) Բորսայական կոդը,
3) Հանձնարարականի հերթական համարը,
4) Գործարքի հերթական համարը,
5) Գործարքի կատարման ստույգ ժամանակը հետևյալ հաջորդականությամբ՝ տարի/ամիս/օր/ժամ/րոպե,
6) Գործարքի տեսակը (առք/վաճառք),
7) Ժամանակային պայմանը,
8) Արժեթղթերի ծածկագիրը,
9) Արժեթղթի տեսակը,
10) Թողարկողի անվանումը,
11) Թողարկողի երկիրը,
12) Արժեթղթերի քանակը,
13) Արժեթղթի միավորի գինը,
14) Գործարքի ընդհանուր ծավալը,
15) Գործարքի մյուս կողմը,
16) Գործարքի կնքման վայրը,
17) Գանձվող միջնորդավճարի չափը՝ մանրամասն բացվածքով:

15.3. Հանձնարարականի մերժման/չեղարկման/փոփոխման դեպքում, գրանցամատյանում տվյալ հանձնարարականը գրանցվում է առանձին տողով, որը նույնականացվում է ըստ հանձնարարականի տարբերակիչ համարի:

15.4. Գործարքների վերաբերյալ հաշվետվությունը ստանալուց հետո, ավտոմատ ձևավորվում և

Հաճախորդի էլ. հասցեին է ուղարկվում Գործարքի մասին հաշվետվություն՝ eFO 75-12-45, (ըստ յուրաքանչյուր գործարքի):

## ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

16.1. Բանկը Ընթացակարգով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց Հաճախորդից գանձում է իր սակագներով սահմանված միջնորդավճարներ:

16.2. Հաճախորդը փոխհատուցում է նաև իր Հանձնարարականի կատարման ժամանակ Բանկի կրած այն անկանխատեսելի գործառնական ծախսերը, որոնք կարող են ի հայտ գալ երրորդ անձանց ներգրավմամբ, այլ առևտրային համակարգերի կիրառմամբ գործարքների դեպքում: Նման ծախսերը չեն ներառվում Բանկի կողմից սահմանված Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներում: Նման ոչ ստանդարտ գործարքների իրականացումից առաջ Բանկը պարտավոր է Հաճախորդին տեղեկացնել նման ծախսերի մասին:

16.3. Բանկի կողմից սահմանված սակագները, ծախսերի հատուցումները և Բանկի նկատմամբ ցանկացած այլ պարտավորություններ, որոնք կապված են Բրոքերային ծառայությունների մատուցման հետ Բանկը անակցեպտ գանձում է Հաճախորդի՝ Բանկում սպասարկվող Բանկային հաշիվներից: Բանկը Հանձնարարականի կատարումից հետո, ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, գանձում է սահմանված միջնորդավճարը Հաճախորդի ՀՀ դրամով Բանկային հաշվից, իսկ այդ հաշվին միջոցների բացակայության դեպքում այլ արժույթներով Բանկային հաշիվներից՝ այդ պահին Բանկում սահմանված փոխարժեքով:

16.4. Եթե Բանկը, ՀՀ օրենսդրությանը համաձայն, պարտավոր է հանդես գալ որպես Հաճախորդի հարկային գործակալ, ապա Բանկը գանձում ու փոխանցում է Հաճախորդների կողմից վճարման ենթակա հարկային պարտավորությունները՝ կապված տվյալ ծառայության մատուցման արդյունքում եկամուտների ստացման հետ: Ընդ որում միջազգային շուկաներում կատարված գործարքների դեպքում Բանկը չի հանդիսանում Հաճախորդի հարկային գործակալ:

16.5. Բրոքերային ծառայությունների մատուցման սակագները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում:

16.6. Բանկը կարող է միակողմանիորեն փոփոխել իր կողմից սահմանված սակագները, այդ մասին առնվազն 20 օր առաջ Հաճախորդին ծանուցելու պայմանով, ընդ որում՝ Հաճախորդը ծանուցված է համարվում Բանկի ինտերնետային կայքում համապատասխան փոփոխությունների հրապարակումից հետո:

## ԲԱԺԻՆ 5. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17.1. Գործող օրենսդրության մեջ հետագայում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարվելու դեպքում Բանկն առաջնորդվում է այդ փոփոխություններով և/կամ լրացումներով՝ մինչև Ընթացակարգն օրենսդրության նոր պահանջներին համապատասխանեցնելը:

17.2. Ընթացակարգի ուժի մեջ մտնելու պահից acba digital ինտերնետ բանկինգ համակարգին վերաբերող կարգավորումները տարածվում են acba digital բջջային հավելվածի վրա, իսկ web տիրույթում դրանք կգործեն համապատասխան ծրագրային ապահովման ներդրման պահից:

17.3. Ընթացակարգի սույն խմբագրությունն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 15-ից:

# ՀՈՍՔԱԳԻԾ

| Առնչվող փաստաթղթեր | Ք այլ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ | ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հ | ԳԳՏՏ-ՖՏ | ԴՎ | ԴԲՕԲ | ԱԳՀԲ | Գ | ՖԳՀԲ |
| | 1 | Հաճախորդի ցանկություն | X | | | | | X | |
| eFO 75-12-33<br>eFO 75-12-34<br>eFO 75-12-35<br>eFO 72-00-680<br>eFO 72-00-683 | 2 | Պայմանների տեղեկացում | X | | X | | | X | |
| | 3 | Հաճախորդի որոշում → ՈՉ → Ավարտ | X | | | | | | |
| eFO 75-12-36<br>eFO 75-12-37<br>eFO 72-00-681<br>eFO 72-00-682 | 4 | Հաճախորդի մասին տեղեկությունների ստացում և դասակարգում<br>Հաշիվների բացում | X | | X | | | | |
| | 5 | Պայմանագրի կնքում | X | | | X | X | | |
| eFO 72-00-678 | 6 | Դրամական միջոցների դեպոնացում և արժեթղթերի առևտրային արգելադրում | X | | X | | | X | |
| eFO 75-12-39 | 7 | Հաճախորդի կողմից հանձնարարականների ներկայացում | | | X | X | X | | X |
| eFO 75-12-40<br>eFO 75-12-41 | 8 | Հանձնարարականի կատարում կամ չկատարում | X | | X | | | X | |
| | 9 | Գործարքի մասին հաշվետվության կազմում և տրամադրում | | | X | | | | |
| eFO 75-12-45 | 10 | Հաշվապահական ձևակերպումների իրականացում | | X | X | | | | |
| | 11 | Ավարտ | | | | X | X | | X |
| | 12 | | | | | | | | |

***Հապավումներ՝***

**ԳԳՏՏ-ՖՏ՝** Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Ֆինանսական տնօրեն, **ԴՎ՝** Դիլինգի վարչություն, **ԴԲՕԲ՝** Դիլինգի բեք օֆիսի բաժին, **ԱԳՀԲ՝** Արտաքին գործառնությունների և հաշվարկների բաժին, **Գ՝** գործառնավար/հաճախորդների սպասարկման մասնագետ, **Հ՝** հաճախորդ, ՖԳՀԲ՝ Ֆինանսական գործիքների հաշվառման բաժին:

| ՀԱՍՏԱՏԵՑ |
|---|
| **Գլխավոր գործադիր տնօրեն**<br><br>**14.04.2026թ.**<br><br>**Հ. Անդրեասյան** |

| ԿԱՌՄԵՑ |
|---|
| **Արժեթղթերով և փողի շուկայում գործառնությունների բաժնի պետ**<br><br>**Ն. Ավալյան** |